Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	17,601	18,204	21,669	584,541	-	642,015
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	9,288,498	7,027,756	4,888,163	1,209,117	-	22,413,534
Այլ ներգրավված միջոցներ	1,142,028	20,687	44,368	678,411	327,599	2,213,093
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	3,109	-	-	2,403,520	2,406,629
	10,448,127	7,069,756	4,954,200	2,472,069	2,731,119	27,675,271
Տոկոսադրույքի ճեղքվածք	(5,149,790)	(5,315,978)	(3,445,342)	9,035,040	3,177,934	(1,698,136)

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
 2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների միջանկյալ
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
31 դեկտեմբերի 2015թ.						
Տոկոսակիր ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,113,970	-	-	-	-	1,113,970
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	42,275	850,596	48,065	3,164,337	-	4,105,273
Պահանջներ բանկերի նկատմամբ	3,887,876	483,742	-	-	-	4,371,618
Հաճախորդներին տրված վարկեր	1,062,234	863,507	1,466,014	8,547,741	6,015,454	17,954,950
	6,106,355	2,197,845	1,514,079	11,712,078	6,015,454	27,545,811
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	31,362	17,711	28,467	584,967	-	662,507
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	11,554,701	6,544,610	8,209,132	1,242,665	-	27,551,108
Այլ ներգրավված միջոցներ	1,354,098	18,715	41,852	644,997	341,767	2,401,429
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	60,056	-	-	-	2,417,755	2,477,811
	13,000,217	6,581,036	8,279,451	2,472,629	2,759,522	33,092,855
Տոկոսադրույքի ճեղքվածք	(6,893,862)	(4,383,191)	(6,765,372)	9,239,449	3,255,932	(5,547,044)

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2016թ. մարտի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	Մարտի 31, 2016թ.			Դեկտեմբերի 31, 2015թ.		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	13.9%	6.4%	-	13.9%	6.4%	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	6.7%	-	-	6.6%	-
Հաճախորդներին տրված վարկեր	14.0%	6.4%	4.3%	14.1%	6.3%	4.4%
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	8.2%	-	-	8.2%	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	2.9%	1.3%	0.6%	2.5%	1.5%	0.6%
- Ժամկետային ավանդներ	13.6%	5.2%	2.9%	13.2%	5.6%	2.9%
Այլ ներգրավված միջոցներ	9.1%	6.2%	-	9.0%	6.2%	-
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	9.4%	-	-	9.4%	-

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով:

Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի փոփոխության (վերագնորոշման ռիսկ) նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2016թ. մարտի 31-ի ու 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	58,790	71,199
100 բկ զուգահեռ աճ	(58,790)	(71,199)

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2016թ. մարտի 31-ի ու 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	Մարտի 31, 2016թ.		Դեկտեմբերի 31, 2015թ.	
	Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ	Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	-	132,512	-	128,828
100 բկ զուգահեռ աճ	-	(132,512)	-	(128,828)

(ii) Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Բանկը չի հեջավորում իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2016թ. մարտի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,081,465	2,416,746	357,593	41,458	7,897,262
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	2,778,335	1,423,871	-	-	4,202,206
Պահանջներ բանկերի նկատմամբ	67,500	3,931,289	273,265	-	4,272,054
Հաճախորդներին տրված վարկեր	5,879,989	11,359,927	117,002	-	17,356,918
Այլ ֆինանսական ակտիվներ	2,883	1,956	11	-	4,850
Ընդամենը	13,810,172	19,133,789	747,871	41,458	33,733,290
Պարտավորություններ					

«Բիրյու Բանկ Արմենիա» ՓԲԸ
 2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների միջանկյալ
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Բանկերի ավանդներ և մնացորդներ	645,737	-	-	-	645,737
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,279,970	20,521,445	702,747	36,358	25,540,520
Այլ ներգրավված միջոցներ	1,100,457	1,112,636	-	-	2,213,093
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	2,406,629	-	-	2,406,629
Այլ ֆինանսական պարտավորություններ	100,564	20,200	16,215	-	136,979
Ընդամենը	6,126,728	24,060,910	718,962	36,358	30,942,958
Ջուտ դիրքը	7,683,444	(4,927,121)	28,909	5,100	2,790,332
Ռիսկերի կառավարման մպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունը	(1,638,408)	1,634,686	-	-	(3,722)
Ջուտ դիրքը՝ ռիսկերի կառավարման մպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունից հետո	6,045,036	(3,292,435)	28,909	5,100	2,786,610

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Եվրո հազ. դրամ	Այլ արտարժույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,762,189	4,083,773	646,333	32,528	10,524,823
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	2,694,904	1,423,529	-	-	4,118,433
Պահանջներ բանկերի նկատմամբ	143,577	4,436,680	-	-	4,580,257
Հաճախորդներին տրված վարկեր	5,995,776	11,843,250	115,924	-	17,954,950
Այլ ֆինանսական ակտիվներ	3,791	2,409	100	-	6,300
Ընդամենը	14,600,237	21,789,641	762,357	32,528	37,184,763
Պարտավորություններ					
Բանկերի ավանդներ և մնացորդներ	662,511	-	-	-	662,511
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	4,838,189	22,994,548	716,188	23,075	28,572,000
Այլ ներգրավված միջոցներ	1,075,145	1,326,284	-	-	2,401,429
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	2,477,811	-	-	2,477,811
Այլ ֆինանսական պարտավորություններ	104,544	9,292	263	-	114,099
Ընդամենը	6,680,389	26,807,935	716,451	23,075	34,227,850
Ջուտ դիրքը	7,919,848	(5,018,294)	45,906	9,453	2,956,913
Ռիսկերի կառավարման մպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունը	(1,667,861)	1,668,938	-	-	1,077
Ջուտ դիրքը՝ ռիսկերի կառավարման մպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունից հետո	6,251,987	(3,349,356)	45,906	9,453	2,957,990

2016թ. մարտի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Բանկը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում դրամի նկատմամբ	(329,244)	(334,936)
Եվրոյի փոխարժեքի 10% արժևորում դրամի նկատմամբ	2,891	4,591

2016թ. մարտի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ: Բանկը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը կառավարելու համար (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար):

Իրավաբանական անձանց վարկերի դիմումները պատրաստվում և վերլուծվում են Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության համապատասխան աշխատակիցների կողմից, որը պատասխանատու է Բանկի իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի համար: Այս վարչության վարկային վերլուծաբանների կողմից պատրաստված հաշվետվությունները հիմնված են հաճախորդի գործունեության և գործունեության ֆինանսական արդյունքների կառուցվածքային վերլուծության վրա: Այնուհետև, վարկային դիմումը և հաշվետվությունն անցնում են անկախ ուսումնասիրություն Ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը տալիս է երկրորդ եզրակացությունը՝ ստուգելով համապատասխանությունը վարկային քաղաքականության պահանջներին: Կառավարման հանձնաժողովն ուսումնասիրում է վարկի դիմումը Կորպորատիվ բանկային ծառայությունների վարչության կողմից ներկայացված նյութերի հիման վրա: Նախքան Կառավարման հանձնաժողովի վերջնական հաստատումը, առանձին գործարքներն ուսումնասիրվում են նաև Իրավաբանական բաժնի կողմից՝ կախված ռիսկերի առանձնահատկություններից:

Բանկը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Բանկի կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է անկախ գնահատողի կամ Բանկի մասնագետների կողմից:

Անհատների վարկերի դիմումներն ուսումնասիրվում են Մանրածախ վարկերի հաստատման բաժնի, Մանրածախ վարկերի հաստատման կոմիտեի և Կառավարման հանձնաժողովի կողմից՝ ելնելով վավերացված սահմանաչափերից:

Բացի առանձին հաճախորդների վերլուծությունից, ողջ վարկային պորտֆելը գնահատվում է Ռիսկերի կառավարման բաժնի կողմից՝ վարկերի կենտրոնացման և շուկայական ռիսկերի տեսանկյունից:

Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է վարկային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,897,262	10,524,823
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	4,202,206	4,118,433
Պահանջներ բանկերի նկատմամբ	4,272,054	4,580,257
Հաճախորդներին տրված վարկեր	17,356,918	17,954,950
Այլ ֆինանսական ակտիվներ	4,850	6,300
Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը	33,733,290	37,184,763

Սովորաբար գրավ չի պահանջվում արժեթղթերում կատարած ներդրումների և բանկերին տրված վարկերի դիմաց, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման գործունեության մաս:

Հաճախորդներին տրված վարկերի գրավի և վերջիններիս գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների հետ կապված վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ գործիքներին վերաբերող նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե ոչ:

Նմանատիպ պայմանագրերը ներառում են ածանցյալների քլիրինգային պայմանագրերը, հետգնման հիմնական պայմանագրերը և արժեթղթերի փոխառության հիմնական պայմանագրերը: Այնպիսի ֆինանսական գործիքները, ինչպիսիք են վարկերը և ավանդները, չեն բացահայտվում ստորև ներկայացվող աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Բանկը ստանում և տրամադրում է գրավ շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման գործարքների, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերի գծով:

Նման գրավի համար գործում են ոլորտում ընդունված ստանդարտ պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են

գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը՝ պայմանագրային կողմի կողմից գրավ տրամադրելու անկարողության պատճառով:

Վերը նշված պայմանագրերը չեն բավարարում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցման պայմանները: Պատճառն այն է, որ այս պայմանագրերը տալիս են ճանաչված գումարները հաշվանցելու իրավունք, որն իրագործելի է միայն Բանկի կամ պայմանագրային կողմերի կողմից պարտավորությունների չկատարման, անվճարունակ դառնալու կամ սնանկացման դեպքում: Բացի այդ, Բանկը և վերջինիս պայմանագրային կողմերը չունեն հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Բանկը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում է հաստատվում է ԱՊԿՀ-ի կողմից:

Բանկը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է այլ բանկերից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը, հիմնական հաճախորդ իրավաբանական անձանց և անհատների վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ և հեշտությամբ բավարարելու համար:

Բանկի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտաբժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի վարում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման անընդհատության ծրագրերի ապահովում,

- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Գանձապետարանը բաժիններից ստանում է տեղեկատվություն վերջիններիս ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության կառուցվածքի ու ապագայում պլանավորվող գործունեությունից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վերաբերյալ: Այնուհետև, Գանձապետարանը ձևավորում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների համապատասխան պորտֆել, որը հիմնականում բաղկացած է առևտրային նպատակներով պահվող կարճաժամկետ իրացվելի արժեթղթերից, բանկերին տրված վարկերից և այլ միջբանկային գործիքներից՝ նպատակ ունենալով ապահովել իրացվելիության բավարար մակարդակ Բանկում:

Գանձապետարանը վերահսկում է իրացվելիության դիրքը օրական կտրվածքով և իրականացնում է կանոնավոր «սթրես-թեսթեր» իրացվելիության գծով՝ շուկայի սովորական և ավելի խիստ պայմանների ենթադրության կիրառմամբ: Սովորական շուկայական պայմաններում Բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ տեղեկատվություն ներառող հաշվետվությունները ներկայացվում են վերադաս դեկավարությանը շաբաթական կտրվածքով: Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ որոշումները կայացնում է ԱՊԿՀ-ն՝ Ռիսկերի կառավարման բաժնի և Գանձապետարանի կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական պարտավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չգեղչված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ընդհանուր համախառն արտահոսքն իրենցից ներկայացնում է դրամական միջոցների չգեղչված հոսքերը պարտավորությունների կամ վարկային պարտավորվածությունների գծով: Ֆինանսական երաշխիքների պայմանագրերի համար երաշխիքի առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում կարող է պահանջվել երաշխիքով ապահովված պարտավորության կատարում:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնության վերլուծությունը 2016թ. մարտի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
31 մարտի 2016թ.							
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	6,527	14,970	18,420	22,743	773,079	835,739	645,737
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	7,123,420	5,341,422	7,243,112	5,095,601	1,322,072	26,125,627	25,540,520
Այլ ներգրավված միջոցներ	1,120,657	21,633	21,457	47,552	1,402,516	2,613,815	2,213,093
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	-	3,109	-	4,445,623	4,448,732	2,406,629
Այլ ֆինանսական պարտավորություններ	130,979	-	3,000	-	3,000	136,979	136,979
Ընդամենը	8,381,583	5,378,025	7,289,098	5,165,896	7,946,290	34,160,892	30,942,958
Վարկային պարտավորվածություններ	521,845	-	-	-	-	521,845	521,845

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների միջանկյալ
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնության վերլուծությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռային արժեք
31 դեկտեմբերի 2015թ.							
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	27,666	3,783	18,274	30,379	785,393	865,495	662,511
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	5,820,706	6,825,511	6,698,319	8,616,468	1,354,916	29,315,920	28,572,000
Այլ ներգրավված միջոցներ	1,334,417	19,916	19,390	44,823	1,382,666	2,801,212	2,401,429
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	60,056	-	-	4,529,383	4,589,439	2,477,811
Այլ ֆինանսական պարտավորություններ	108,313	5,786	-	-	-	114,099	114,099
Ընդամենը	7,291,102	6,915,052	6,735,983	8,691,670	8,052,358	37,686,165	34,227,850
Վարկային պարտավորվածություններ	803,696	-	-	-	-	803,696	803,696

ՀՀ օրենսդրության համաձայն՝ անհատները կարող են ցանկացած պահի ելքագրել իրենց ժամկետային ավանդները՝ դեպքերի մեծամասնությունում կորցնելով հաշվեգրված տոկոսները: Այս ավանդները դասակարգվում են ըստ պայմանագրային մարման ժամկետների: Ստորև ներկայացված են այս ավանդների դասակարգումն ըստ նշված մարման ժամկետների:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ
Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	2,399,460	1,128,960
1-ից 3 ամիս ժամկետով	3,773,552	6,411,544
3-ից 12 ամիս ժամկետով	10,970,655	12,914,229
Ավելի քան 1 տարի ժամկետով	1,204,164	1,237,890
	18,347,831	21,692,623

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
 2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների միջանկյալ
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. մարտի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

	Ցայահանջ և միջև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,897,262	-	-	-	-	-	-	7,897,262
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	918,790	1,293	56,821	3,212,142	-	13,160	-	4,202,206
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,238,099	1,933,052	968,739	-	-	132,164	-	4,272,054
Հաճախորդներին տրված վարկեր Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	361,036	554,786	2,237,076	5,520,045	5,909,053	-	2,774,922	17,356,918
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	991,704	-	991,704
Հետաձգված հարկային ակտիվներ	5,236	4,154	43,601	1,475,518	-	-	-	1,528,509
	-	-	-	-	-	7,390	-	7,390
Ընդամենն ակտիվներ	10,420,423	2,493,285	3,306,237	10,207,705	5,909,053	1,144,418	2,774,922	36,256,043
Պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	6,513	14,810	39,873	584,541	-	-	-	645,737
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	7,117,187	5,291,468	11,922,748	1,209,117	-	-	-	25,540,520
Այլ ներգրավված միջոցներ	1,120,639	21,389	65,055	678,411	327,599	-	-	2,213,093
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	-	3,109	-	2,403,520	-	-	2,406,629
Այլ պարտավորություններ	159,928	34	6,810	3,816	6,678	-	-	177,266
Ընդամենը	8,404,267	5,327,701	12,037,595	2,475,885	2,737,797	-	-	30,983,245
Զուտ դիրքը	2,016,156	(2,834,416)	(8,731,358)	7,731,820	3,171,256	1,144,418	2,774,922	5,272,798

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
 2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների միջանկյալ
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն ըստ պայմանագրային մարման ժամկետների:

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ժամկետանց	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,524,823	-	-	-	-	-	-	10,524,823
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	42,275	898,661	3,164,337	-	13,160	-	4,118,433
Պահանջներ բանկերի նկատմամբ	4,467	3,884,486	483,742	-	-	207,562	-	4,580,257
Հաճախորդներին տրված վարկեր	308,338	753,896	2,329,521	5,931,234	6,015,454	-	2,616,507	17,954,950
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	1,014,575	-	1,014,575
Այլ ակտիվներ	7,123	5,670	59,214	1,455,203	-	-	-	1,527,210
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-	-	-	18,054	-	18,054
Ընդամենն ակտիվներ	10,844,751	4,686,327	3,771,138	10,550,774	6,015,454	1,253,351	2,616,507	39,738,302
Պարտավորություններ								
Բանկերի ավանդներ և մնացորդներ	27,647	3,719	46,178	584,967	-	-	-	662,511
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	5,816,029	6,752,568	14,760,738	1,242,665	-	-	-	28,572,000
Այլ ներգրավված միջոցներ	1,334,399	19,699	60,567	644,997	341,767	-	-	2,401,429
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից	-	60,056	-	-	2,417,755	-	-	2,477,811
Այլ պարտավորություններ	198,938	5,820	3,907	816	6,731	-	-	216,212
Ընդամենը	7,377,013	6,841,862	14,871,390	2,473,445	2,766,253	-	-	34,329,963
պարտավորություններ	3,467,738	(2,155,535)	(11,100,252)	8,077,329	3,249,201	1,253,351	2,616,507	5,408,339
Զուտ դիրքը								

Հայաստանի բանկերի համար գործող ընդհանուր տնտեսական միջավայրից ելնելով՝ հաճախորդների ավանդների միջին ժամկետայնությունը որպես կանոն մինչև 1 տարի է, մինչդեռ հաճախորդներին տրված վարկերինը՝ 1 տարուց ավել, ինչը հանգեցնում է իրացվելության բացասական ճեղքվածքի «մինչև 1 տարի» մարման ժամկետի տիրույթում: 2016թ. մարտի 31-ի դրությամբ բացասական ճեղքվածքը կազմել է 9,549,618 հազար դրամ (31 դեկտեմբերի 2015թ.՝ 9,788,049 հազար դրամ)՝ կազմելով մարման ժամկետի նույն տիրույթում ընդհանուր պարտավորությունների 37.1%-ը (31 դեկտեմբերի 2015թ.՝ 33.7%):

Բացասական ճեղքվածքը զգալիորեն նվազում է հիմնական ընթացիկ հաշիվների կայունության և ժամկետային ավանդների վերաներդրման բարձր մակարդակի շնորհիվ: Ցպահանջ ավանդների միջին օրական մնացորդը կազմել է 4,560,925 հազար դրամ (31 դեկտեմբերի 2015թ.՝ 4,576,193 հազար դրամ): 2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների ընթացքում մարման ժամկետը լրացած ժամկետային ավանդների միջինում 76.4%-ը վերաներդրվել էր հաճախորդների կողմից (2015թ-ին՝ 81.7%):

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Բանկի կողմից կիրառվող հիմնական ուղենիշը բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունն է: Այս նպատակով բարձր իրացվելի ակտիվները ներառում են դրամական միջոցները, նոստրո հաշիվները, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթերը և այն կորպորատիվ պարտքային արժեթղթերը, որոնց համար գործում է ակտիվ և իրացվելի շուկա, որոնք գրավադրված չեն և որոնց օգտագործումը ոչ մի կերպ սահմանափակված չէ: Ցպահանջ պարտավորությունները ներառում են հաճախորդների ընթացիկ հաշիվները և ցպահանջ ավանդները, ինչպես նաև ըստ պահանջի վճարման ենթակա այլ պարտավորությունները: Ստորև ներկայացված է բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու տարվա համար:

	Մարտի 31, 2016թ.	Դեկտեմբերի 31, 2015թ.
Հաշվետու ամսվա համար	257.5%	314.0%
Միջինը ժամանակահատվածի համար	279.5%	269.2%
Առավելագույնը ժամանակահատվածի համար	306.8%	320.9%
Նվազագույնը ժամանակահատվածի համար	257.5%	190.2%

Վերը ներկայացված հարաբերակցությունը կիրառվում է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված իրացվելիության սահմանաչափերի հետ համապատասխանությունը որոշելու համար (նվազագույնը՝ 60%):

25 Կապիտալի կառավարում

Բանկի կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային հաստատությունների կապիտալի համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2016թ. մարտի 31-ի դրությամբ սահմանված նվազագույն մակարդակը կազմում է 12%: 2016թ. մարտի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում էր սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2016թ. մարտի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ Աուդիտ չանցած
Բաժնետիրական կապիտալ	8,125,100	8,125,100
Էմիսիոն եկամուտ	257,149	257,149
Գլխավոր պահուստ	51,292	51,292
Կուտակված վնաս	(2,097,394)	(1,917,414)
Նվազեցումներ	(1,180,600)	(920,954)
Ընդամենը հիմնական կապիտալ	5,155,547	5,595,173

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ Աուդիտ չանցած
Լրացուցիչ կապիտալ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	(29,563)	(72,210)
Ստորադաս փոխառություն	2,403,950	2,418,750
Ընդամենը լրացուցիչ կապիտալ	2,374,387	2,346,540
Ընդամենը կապիտալ	7,529,934	7,941,713
 Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	 31,974,721	 34,497,607
 Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը	 23.5%	 23.0%
 Ընդամենը հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցությունը	 16.1%	 16.2%

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած ընդունելի գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

26 Վարկային պարտավորվածություններ

Բանկն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Դրանք իրենցից ներկայացնում են հաստատված վարկերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների տրամադրման պարտավորվածություններ:

Բանկը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ՝ հաճախորդների պարտավորությունների կատարումը երրորդ անձանց նկատմամբ երաշխավորելու նպատակով: Այս պայմանագրերն ունեն ֆիքսված ժամկետներ՝ սովորաբար մինչև մեկ տարի:

Վարկային պարտավորվածությունների, ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների հետ կապված Բանկը կիրառում է վարկային ռիսկի կառավարման մույն քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնք գործում են հաճախորդներին վարկեր տրամադրելիս:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են: Աղյուսակում երաշխիքների և ակրեդիտիվների գծով արտացոլված գումարները ներկայացնում են առավելագույն հաշվապահական վնասը, որը կգրանցվի հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե պայմանագրային կողմերը չկատարեն պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Դեկտեմբերի 31, 2015թ. հազ. դրամ
Պայմանագրային գումար		
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորվածություններ	297,440	620,769
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	121,805	141,286
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	102,600	41,641
	521,845	803,696

Վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները պարտադիր չէ, որ իրենցից ներկայացնեն դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

2016թ. մարտի 31-ի դրությամբ այս պարտավորվածություններից 239,472 հազար դրամ գումարով պարտավորվածությունները (31 դեկտեմբերի 2015թ.՝ 524,705 հազար դրամ) վերաբերում են հինգ հաճախորդի (31 դեկտեմբերի 2015թ.՝ հինգ հաճախորդի): Սա վկայում է էական վարկային ռիսկի առկայության մասին:

27 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկն ապահովագրված է մինչև 500,000 հազար դրամի չափով՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար: Ապահովագրությունը ծածկում է Բանկի շենքերի և սարքավորումների, գործունեության ընդհատման և գույքին առնչվող երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունները, որոնք կարող են առաջանալ Բանկի գույքի կամ գործունեության հետ կապված պատահարներից: Բանկն ապահովագրել է նաև դրամարկղերը 90,000 հազար դրամի չափով՝ ֆիզիկական վնասից և գողությունից:

(բ) Իրավական պարտավորություններ

Ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

(գ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Բանկի մայր կազմակերպությունն է «Բիրլու Բանկ» Էս-Էյ-Էլ -ը, որին պատկանում է Բանկի բաժնետիրական կապիտալի 65%-ը: Մայր կազմակերպությունը ներկայացնում է հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվություններ: Բանկի վերջնական վերահսկող անձն է պրն. Ֆրանսուա Բասիլը:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ

Ստորև ներկայացված է անձնակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2016թ. և 2015թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների համար:

	Հունվարի 1, 2016. Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Հունվարի 1, 2015. Մարտի 31, 2015թ. հազ. դրամ
Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին	24,850	64,869

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են 2016թ. մարտի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	Դեկտեմբեր 31, 2015թ. հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Տրված վարկեր (համախառն)	54,260	8.7%	63,760	9.7%
Վարկերի արժեզրկման գծով պահուստ	(109)		(128)	
Ստացված ավանդներ	222,637	5.4%	212,496	5.6%

Կապակցված կողմերին վարկերը տրվում են ՀՀ դրամով և ենթակա են մարման 1-ից 15 տարվա ընթացքում՝ կախված վարկի տեսակից: Վարկերն ապահովված են համապատասխան տեսակի գրավով, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 15-ի (գ) կետի (ii) ենթակետում:

Ստորև ներկայացված են Տնօրենների խորհրդի և Կառավարման հանձնաժողովի անդամների հետ գործարքների գծով շահույթում կամ վնասում արտացոլված գումարները 2016թ. և 2015թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների համար:

	Հունվարի 1, 2016. Մարտի 31, 2016թ. հազ. դրամ	Հունվարի 1, 2015. Մարտի 31, 2015թ. հազ. դրամ
Շահույթ կամ վնաս		
Տոկոսային եկամուտ	1,239	3,397
Տոկոսային ծախս	(2,992)	(4,005)
Արժեզրկման հակադարձում	19	7

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են մայր կազմակերպությունը, նրա այլ դուստր կազմակերպությունները և չվերահսկող բաժնետերերին: Ստորև ներկայացված են 2016թ. մարտի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսներին շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		Բանկի նկատմամբ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություններ		Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ		Ընդամենը
	Միջին արդյունավետ տոկոսադր., %		Միջին արդյունավետ տոկոսադր., %		Միջին արդյունավետ տոկոսադր., %		
	հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ		
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ							
- ԱՄՆ դոլարով	108,760	-	-	-	83,957	-	192,717
- եվրոյով	27,867	-	-	-	11,578	-	39,445
- այլ արտարժույթով	20,790	-	-	-	-	-	20,790
Պարտավորություններ							
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից							
- ԱՄՆ դոլարով	2,406,629	9.4%	-	-	-	-	2,406,629
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- ԱՄՆ դոլարով	-	-	-	-	8	-	8
Շահույթ կամ վնաս							
Տոկոսային եկամուտ	46	-	-	-	-	-	46
Տոկոսային ծախս	(58,118)	-	-	-	-	-	(58,118)
Միջնորդավճարների գծով ծախս	3,565	-	-	-	-	-	3,565
Միջնորդավճարների գծով եկամուտ	(928)	-	-	-	(111)	-	(1,039)
Զուտ այլ գործառնական ծախսեր	-	-	(49)	-	-	-	(49)
Մասնագիտական ծառայություններ	(2,080)	-	-	-	-	-	(2,080)

«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
2016թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների միջանկյալ
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Այլ կապակցված կողմերը ներառում են մայր կազմակերպությունը, նրա այլ դուստր կազմակերպությունները և չվերահսկող բաժնետերերին: Ստորև ներկայացված են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ. մարտի 31-ին ավարտված երեք ամիսների ընթացքում շահույթում կամ վնասում արտացոլված գործարքների գումարները:

	Մայր կազմակերպություն		Բանկի նկատմամբ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություններ		Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ		Ընդամենը
	Միջին արդյունավետ տոկոսադր., %		Միջին արդյունավետ տոկոսադր., %		Միջին արդյունավետ տոկոսադր., %		
	հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ							
- ԱՄՆ դոլարով	75,211	-	-	-	84,474	-	159,685
- եվրոյով	88,708	-	-	-	11,307	-	100,015
- այլ արտարժույթով	7,547	-	-	-	-	-	7,547
Պարտավորություններ							
Ստորադաս փոխառություն մայր կազմակերպությունից							
- ԱՄՆ դոլարով	2,477,811	9.4%	-	-	-	-	2,477,811
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ							
- ԱՄՆ դոլարով	-	-	-	-	9	-	9
Շահույթ կամ վնաս							
Տոկոսային եկամուտ	13	-	-	-	-	-	13
Տոկոսային ծախս	(87,201)	-	(4,836)	-	(21,614)	-	(113,651)
Միջնորդավճարների գծով ծախս	(830)	-	-	-	(54)	-	(884)
Զուտ այլ գործառնական ծախսեր	-	-	(98)	-	-	-	(98)

Կապակցված կողմերի գծով դրամական միջոցները և դրանց համարժեքները գրավով ապահովված չեն:

29 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

2016թ. մարտի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի և ՀՀ դրամով արտահայտված հաճախորդներին տրված վարկերի ու հաճախորդներից ստացված ժամկետային ավանդների, մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին: 2016թ. մարտի 31-ի դրությամբ 13,160 հազար դրամ հաշվեկշռային արժեքով (31 դեկտեմբերի 2015թ.՝ 13,160 հազար դրամ) վաճառքի համար մատչելի չգնանշված բաժնային արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէ որոշել:

2016թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ դրամով արտահայտված հաճախորդներին տրված վարկերի և ընթացիկ հաշիվների ու ժամկետային ավանդների 17,356,918 հազար դրամով (31 դեկտեմբերի 2015թ.՝ 17,954,950 հազար դրամ) և 25,540,520 հազար դրամ (31 դեկտեմբերի 2015թ.՝ 28,572,000 հազար դրամ) իրական արժեքները ցածր են դրանց հաշվեկշռային արժեքներից համապատասխանաբար 75,778 հազար դրամով (31 դեկտեմբերի 2015թ.՝ 260,967 հազար դրամով) և 91,909 հազար դրամով (31 դեկտեմբերի 2015թ.՝ 124,205 հազար դրամով): ՀՀ դրամով արտահայտված հաճախորդներին տրված վարկերի և ընթացիկ հաշիվների ու ժամկետային ավանդների իրական արժեքների չափումները դասվում են իրական արժեքի հիերարխիայի համապատասխանաբար 3-րդ և 2-րդ մակարդակներին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. մարտի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	-	4,189,046	-	4,189,046

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	-	4,105,273	-	4,105,273

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի և դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները, նմանատիպ գործիքների հետ համեմատությունը, որոնց համար առկա են շուկայի դիտարկելի գներ, և այլ գնահատման մոդելներ: Գնահատման մեթոդներում կիրառվող ենթադրությունները և ելակետային տվյալները ներառում են ռիսկից զերծ և ելակետային տոկոսադրույքները, վարկային սպրեդերը և այլ ճշգրտումները, որոնք օգտագործվում են զեղչման դրույքները, պարտատոմսերի և բաժնետոմսերի գները, արտարժույթի փոխարժեքները, բաժնետոմսերի և բաժնետոմսերի ինդեքսների գները գնահատելու համար: Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է ֆինանսական գործիքի գինը հաշվետու ամսաթվի դրությամբ, որը կորոշվեր շուկայի մասնակիցների կողմից «անկախ կողմերի միջև գործարքում»: